

ԳՐԱԴԱՐԱՆԱԿԱՆ ԴՊԼՈՄԱՆԻՆԻՍՏԻԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Վ. ՂԱԶԱՆՉՅԱՆ—«ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ՏԵՔՍՏԻԼ ԿՈՄԲԻՆԱՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԻՆՔՆԱՐԺԵՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ»

Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչությունը 1959 թ. լույս ընծայեց Վ. Ղազանչյանի ուշագրավ աշխատությունը, նվիրված Լենինականի Մայիսյան ապստամբության անվան տեքստիլ կոմբինատի արտադրանքի ինքնարժեքի իջեցման հարցերին:

Աշխատության մեջ բերվում են ցուցանիշներ, որոնք բնութագրում են կոմբինատի ձեռք բերած հաջողությունները և միաժամանակ բացահայտում նրա սնտեսական գործունեության սովորույթ կողմերը: Կոմբինատի տնտեսական դործունեության մեջ հիմնական թերությունն այն է, որ պլանային առաջադրանքները որոշ չափով թերակատարվել են:

Հեղինակը նախքան ինքնարժեքի վերլուծության անցնելը փորձում է բացահայտել այն պատճառները կամ գործոնները, որոնք ազդում են պլանների կատարման ընթացքի վրա: Վ. Ղազանչյանը տալիս է ոչ միայն որակական, այլև քանակական գնահատական, այսինքն՝ նա հաշվարկների միջոցով ցույց է տալիս այս կամ այն գործոնի ազդեցությունը արտադրանքի քանակի ավելացման կամ պակասեցման վրա: Այսպես որինակ՝ սարքավորված իլիկների պլանային առաջադրանքի թերակատարումը համապատասխանաբար նվազեցնում է համախառն արտադրանքի չափերը, նույնը կարելի է ասել արտապլանային պարապորտների մասին:

Վերլուծման այդ մեթոդը հեղինակը կիրառում է ինչպես ամբողջ կոմբինատի, նույնպես և նրա մեջ մտնող առանձին ձեռնարկությունների նկատմամբ: Այսպես, աշխատության առաջին գլխում, համեմատական անալիզի միջոցով, հեղինակը բացահայտում է մանվածքային և գործվածքային ֆաբրիկաների տնտեսական գործունեության պատկերը:

Աշխատությունում ուսումնասիրվում է արտադրանքի ինքնարժեքի պլանային առաջադրանքների կատարման ընթացքը հինգերորդ հնգամյակում: Հեղինակը ինքնարժեքի վերլուծության համար ելակետ է ընդունում մարքսիստական թաղաքատնտեսության այն դրույթը, որի համաձայն աշխատանքի արտադրողականության բարձրացմամբ, ինքնարժեքի իջեցմամբ առարկայացված աշխատանքը աճում է, իսկ կենդանի աշխատանքը այդ դեպքում հարաբերականորեն նվազում է:

Այս դրույթը հիմնավորվում է կոմբինատի հինգ տարվա արտադրանքի էլեմենտների վերլուծությամբ: Ինքնարժեքի էլեմենտների փոփոխությունները հեղինակը բացատրում է աշխատանքի արտադրողականության աճով, արտադրության տեխնիկական հագեցվածության աստիճանի բարձրացումով: Սակայն հեղինակը՝ համադրելով կոմբինատի ինքնարժեքի էլեմենտները ՍՍՌ բամբակեղենի ճյուղային ինքնարժեքի սովյալների հետ, իրավացիորեն նշում

Տեղեկագիր 7—6

է, որ կոմբինատում դեռևս հիմնական ֆոնդերի օգտագործումը ռացիոնալ չի կատարվում:

1951, 1952 և 1955 թթ. ինքնարժեքի բոլոր էլեմենտների գծով պլանային առաջադրանքները թերակատարվել են, որի հետևանքով 12426 հազ. ռուբլու գերաժախս է առաջացել, սակայն չնայած դրան կոմբինատը հնգամյակի վերջում հումքի և նյութերի խնայողության հաշվին տնտեսել է 38975 հազ. ռուբլի: Հեղինակը հանգում է այն եզրակացության, որ կոմբինատի ստացած խնայողությունը ոչ թե կոմբինատի գործունեության, այլ որևէ արտաքին գործոնի ներգործության հետևանք է:

Հեղինակն իր այս ենթադրությունը հիմնավորել է բազմաթիվ հաշվարկներով՝ քննարկելով ինքնարժեքը նրա էլեմենտների գնագոյացման, համեմատելի արդյունքի և արտադրանքում տեղի ունեցած տեղաշարժերի տեսակետից: Հարցի մանրակրկիտ ուսումնասիրությամբ հեղինակը հանգել է հետևյալ եզրակացության. առաջին՝ վերը նշված խնայողությունը կոմբինատը ձեռք է բերել հումքի պետական գների իջեցման հաշվին, երկրորդ՝ կոմբինատը 1955 թ. ինքնարժեքը բարձրացրել է 1,95%-ով, ինքնարժեքի իջեցման պլանը չի կատարվել: Բամբակեղենի գործվածքների արդյունաբերության ինքնարժեքի էլեմենտներին մեկը հանդիսանում է աշխատավարձը, որն արտադրության պրոցեսում ծախսվող կենդանի աշխատանքի վարձատրման ցուցանիշն է, իսկ կենդանի աշխատանքը, ինչպես հայտնի է, արտադրության պրոցեսի վճարական գործոնն է: Այստեղ կարևոր սկզբունքն այն է, որ թեև աշխատավարձի բացարձակ մեծությունը աճում է, բայց նրա հարաբերական մեծությունը, տեսակարար կշիռն արտադրանքի մեկ միավորի ինքնարժեքում պետք է նվազի, որպես աշխատանքի արտադրողականության բարձրացման հետևանք: Սակայն փոխանակ ըստ պլանի 5,7%-ով կրճատելու արտադրանքի մեկ միավորին ընկնող կենդանի աշխատանքի ծախսումները, կոմբինատը 1955 թ. 0,9%-ով աշխատավարձի գերաժախս է տվել:

Աշխատավարձի գերաժախսի հիմնական պատճառը աշխատանքի արտադրողականության բարձրացման պլանային առաջադրանքների թերակատարումն է, որի հետևանքով աշխատավարձի աճը գերազանցել է աշխատանքի արտադրողականության աճին:

Հեղինակը հանգամանորեն բացահայտում է այն բոլոր գործոնները, որոնք բացասաբար են անդրադարձել աշխատանքի արտադրողականության պլանային առաջադրանքները կատարելու վրա:

Գրախոսվող աշխատության մեջ չի անտեսվում այն հանգամանքը, որ կոմբինատը ձեռք է առել մի շարք լուրջ միջոցառումներ աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու բնագավառում: Սակայն չնայած դրան, աշխատանքի արտադրողականության պլանային առաջադրանքները չեն կատարվել, որովհետև ձեռք բերած հաջողություններին զուգահեռ կոմբինատի աշխատանքներում եղել են լուրջ թերություններ: Հատկապես մեծ ուշադրություն է դարձնում հեղինակը բանվորական ժամանակի ռացիոնալ օգտագործման հարցերի վրա, ցույց է տալիս, որ այստեղ կոմբինատն ունի չօգտագործված մեծ ռեզերվներ: Աշխատանքի արտադրողականության նպաստող գործոններից բացի, տեխնիկական պրոգրեսիվ կարևոր նշանակություն ունի աշխատուժի որակավորումը, նրա հոսունության վերացումը, աշխատուժի օգտագործման լարվածության աստիճանը:

Աշխատության մեջ քննարկվում է նաև հումքի, նրա մնացորդների, թափ-
վելիքների օգտագործման խնդիրները, որոնք նույնպես աշխատանքի ար-
տադրողականության բարձրացման և ինքնարժեքի փչեցման կարևոր գործո-
ներն են:

Ուսումնասիրելով կոմբինատի 1956 թ. տնտեսական գործունեությունը,
Վ. Ղազանչյանը նշում է, որ կոմբինատն ամբողջությամբ վերցրած 1956 թ.
տնտեսական պլանը թերակատարել է, բայց ինքնարժեքի իջեցման պլանը
գերակատարել է 0,25 տոկոսով, ըստ որում ինքնարժեքի իջեցումից ստացվող
խնայողությունը հիմնականում տեղի է ունեցել հումքի և նյութերի հաշվին:
Այստեղ ևս հեղինակը մանրամասն հաշվարկումներով ապացուցում է, որ
1956 թ. կոմբինատի ձեռք բերած խնայողությունը տեղի է ունեցել գլխավորա-
պես ցածրորակ հումք ստանալու հետևանքով, որի գինը զգալիորեն ցածր է
եղել պլանավորված հումքի գներին:

Ընդգծելով, որ ինքնարժեքի իջեցման գլխավոր ուղին աշխատանքի ար-
տադրողականության բարձրացումն է, հեղինակը միաժամանակ հանգամանո-
րեն բացահայտում է այն բոլոր գործոնները, որոնք պայմանավորում են աշ-
խատանքի արտադրողականության բարձրացումը:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ